ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, (060) 687777, (094) 200021 kanachut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝

հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը.

1.Համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2.Համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալական հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
3.Կանաչուտ համայնքի տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին:
5.Համայնքի ավագանու 28.10.2019 թվականի թիվ 8 նիստի թիվ 29 որոշման մեջ ուղղում կատարելու մասին:
6.Կանաչուտ համայնքի տարածքում գտնվող շինության օտարման և մեկնարկային գին սահմանելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, (060) 687777, (094) 200021 kanachut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33- Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ ավագանին որոշեց.

վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
01-01-01-51 ծրագրի 4111 հոդվածից պակասեցնել 1770,0 հազար դրամ և տալ
01-01-01-51 ծրագրի 4269 հոդվածին 300,0 հազար դրամ
01-01-01-51 ծրագրի 4112 հոդվածին 880,0 հազար դրամ
01-03-03-55 ծրագրի 4239 հոդվածին 100,0 հազար դրամ
08-02-01-51 ծրագրի 4112 հոդվածին 90,0 հազար դրամ
10-07-01-54 ծրագրի 4729 հոդվածին 400,0 հազար դրամ
08-02-04-51 ծրագրի 4111 հոդվածից պակասեցնել 90,0 հազար և տալ նույն ծրագրի 4112 հոդվածին
04-03-06-52 ծրագրի 4657 հոդվածից պակասեցնել 700,0 հազար և տալ 10-07-01-54 ծրագրի 4729 հոդվածին:
10-07-01-55 ծրագրի 4819 հդվածից պակասեցնել 100,0 և տալ 01-06-01-60 ծրագրի 4241 հոդվածին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՋ • 04200374 •

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, (060) 687777, (094) 200021 kanachut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով , Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի >> 48-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալական հողամասերը գնման նախապատվության իրավունքով կադաստրային լրիվ արժեքով ուղղակի վաճառքի կարգով օտարել վարձակալներ Վարսենիկ Մեսրոբյանին 03-051-0133-0016 կադաստրային ծածկագրով 0.70642 հա վարելահող 2151100 /երկու միլիոն հարյուր հիսունմեկ հազար հարյուր / ՀՀ դրամ արժեքով և 03-051-0133-0015 կադաստրային ծածկագրով 0.7057 հա վարելահող 2148900 /երկու միլիոն հարյուր քառասունութ հազար ինը հարյուր / ՀՀ դրամ արժեքով , Վլադիսլավ Բաղալյանին 0133-0014 կադաստրային ծածկագրով 0.6589 հա վարելահող 2006400/ երկու միլիոն վեց հազար չորս հարյուր /ՀՀ դրամ արժեքով , Սուրեն Ասատրյանին 03-051-0101-0017 կադաստրային ծածկագրով 0.1907 հա այլ հողատեսք 11000 /տասնմեկ հազար / ՀՀ դրամ արժեքով և 03-051-0101-0007 կադաստրային ծածկագրով 0.17 հա վարելահող (անջրդի) 118600/ հարյուր տասնութ հազար վեց հարյուր / ՀՀ դրամ արժեքով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Կանաչուտ, 098460002 kanachutgp@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35 -Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,10-րդ,11-րդ, 12-րդ,13-րդ և 14-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Արարատի մարզի Կանաչուտ համայնքի 2020 թվականի տեղական տուրքերի հետևյալ տեսակները և դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման)(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝7500/յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,
բ.սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝15000/տասնհինգ հազար/ դրամ,
-500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000/քսանհինգ հազար/ դրամ,
-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝30000/երեսուն հազար/ դրամ,
-3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000/հիսուն հազար/ դրամ.
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.
-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝2500/ երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման

աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա. չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքովօբյեկտի ընդհանուրմակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում էնաևկցակառույցների, վերնակառույցների , տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ ստորգետյա) ընդհանուր մակերեսի ավելացում կամշենքերի գորխառական նշանակության փոփոխություն, և բացի սույ կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ գործառական նշանակության մասով,
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.
3) համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
4) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000/հարյուր հազար/ դրամ,
5) համայնքի տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկասված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.
6) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.
7) համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝
յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000/ վեց հազար / դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500/յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000/ տասներկու հազար / դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝15000

/տասնհինգ հազար/ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000/ քսանհինգ հազար/ դրամ.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000/ վեց հազար / դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500/յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 /տասներկու հազար / դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000/տասնհինգ հազար / դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000/քսանհինգ հազար / դրամ.
8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 175/մեկ հարյուր յոթանասունհինգ/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. առևտրի օբյեկտների համար՝15000/տասնհինգ հազար/ դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 15000/տասնհինգ հազար/ դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 120000/մեկ հարյուր քսան հազար/ դրամ,
դ. խաղատների համար՝270000/երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ 75000/յոթանասունհինգ հազար/ դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ 30000/երեսուն հազար/.
10) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000/ հինգ հազար/ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500/յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10000 /տասը հազար/ դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 /տասներկու հազար/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար ` / տասնհինգ հազար/ դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրայի սննդի օբյեկտի համար՝300/երեք հարյուր/ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրայի սննդի օբյեկտի համար՝600/վեց հարյուր/ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրայի սննդի օբյեկտի համար՝ 1200/մեկ հազար երկու հարյուր/ դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրայի սննդի օբյեկտի համար՝2400/երկու հազար չորս հարյուր/ դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրայի սննդի օբյեկտի համար՝ 4500/չորս հազար հինգ հարյուր/ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրայի սննդի օբյեկտի համար՝ 7500/ յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.
11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս՝ մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600/վեց հարյուր/ դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050/մեկ հազար հիսուն/ դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450/չորս հարյուր հիսուն/ դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ 113/մեկ հարյուր տասներեք/ դրամ,
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝45/ քառասունհինգ/ դրամ.
12) Կանաչուտ համայնքի անվանումը, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան , ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման,ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000/երեսուն հազար/ դրամ.
13) համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000/ հինգ/ հազար դրամ.
2. Կանաչուտ համայնքում 2019 թվականի համար սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը.
1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000/երեք հազար/ դրամ,
2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքները իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000/ հինգ հազար/ դրամ,
3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000/երեք հազար/ դրամ,
4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած

ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000/ հիգ հազար/ դրամ,
5) համանքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000/ երեք հազար/ դրամ,
6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է՝
ա. ֆիզիկական անձանցից /առկա մեկ բնակչից/՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 100/ մեկ հարյուր/ դրամ,
բ. իրավաբանական անձանցից/ըստ գործունեության ոլորտ/առևտրի/ խանութներ, կրպակներ/ հանրային սննդի՝ 20/ քսան /դրամ մեկ քառակուսի մետր տարածքի համար,
գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային՝ 5/դրամ/ դրամ մեկ քառակուսի մետր տարածքի համար,
դ. մշակութային, կրթության, առողջապահական, սպորտային՝ 2/ երկու / դրամ մեկ քառակուսի մետր տարածքի համար:
7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար ՝ մեկ փաստաթղթի համար՝500/հինգ հարյուր/ դրամ փոխհատուցման վճար:
8)Կանաչուտ համայնքի վարչական տարածքում համայնքի անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար սահմանել տեղական վճար.
ա/ խոշոր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան 800 դրամ
բ/ մանր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար ՝ տարեկան 500 դրամ
գ/խոզի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան 300 դրամ
դ/յուրաքանչյուր թռչնի համար ՝ տարեկան 100 դրամ
ե/ձիու յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան 700 դրամ
9)Համայնքի մշակույթի տանը գործող սամբո և ձյուդո մարզաձևերի հաճախող յուրաքանչյուր երեխայի համար սահմանել անդամավճար՝ ամսական 2000 դրամ:
10) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ,իսկ այլ համայնքներից հաճախող երեխաների համար՝ 12000 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, (060) 687777, (094) 200021 kanachut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 36-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով՝ ավագանին որոշեց.

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2020 թվականի համար համաձայն հավելվածի.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**

Հավելված 1

Կանաչուտ համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 26 -ի 36-Ն որոշման

2020 Թ. ԿԱՆԱՉՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	220.000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	125.000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	176.000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	160.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	105.000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Գրադարանավար	1	100.000
Մշակույթի տան տնօրեն	1	93.000
Անասնաբույժ	0,5	50.000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Պահակ/կատարածու	1	93.000
Հավաքարար	1	90.000

Համայնքի ղեկավար Լ. Աաատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, (060) 687777, (094) 200021 kanachut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.10.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ԹԻՎ 29 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշեց.

Համայնքի ավագանու 28.10.2019 թվականի թիվ 8 նիստի <<Գույքահարկի արտոնություն տալու մասին>> թիվ 29 որոշման մեջ <<Տեղական ինքնակառավարման մասին>> բառերը կարդալ <<Գույքահարկի արտոնություն տալու մասին>> բառերով :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԾԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, (060) 687777, (094) 200021 kanachut.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 38

ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով `ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող նախկին բաղնիքի շենքը /ծածկագիր`0023-0004/ օտարել աճուրդային կարգով:
2 Մեկնարկային գին սահմանել ըստ անկախ գնահատողի կողմից ներկայացրած տվյալների . Կանաչուտ համայնքի Ե. Չարենցի փողոց թիվ 33 հասցեում գտնվող բաղնիքի շենքի արժեքը 2.600.000 /երկու միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ

ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**